Այս հուշարձանները և հնագիտական իրերը դեռ չեն ենթարկվել գիտական մշակման, սակայն ընդհանուր տպավորությունն այն է, որ նրանք պատկանում են անդրկովկասյան կուլտուրական հին աշխարհի համար բնորոշ տիպին։ Պետք է ընդգծել մի իրողություն, որ Զանգեզուրի վրա չեն տարածվել Վանի թագավորների նվաճողական արշավանքները և նրանց զորքերը չեն փոխադրվել Զանգեզուր-Ալանգյազ լեռնաշղթայից արևելք։ Ոչ մի բևեռագիր արձանագրություն չի գտնված Զանգեզուրում, ինչպես և այն գետահովիտներում, որոնք բացվում են դեպի մերձարաքսյան դաշտավայրը Նախիջևանի շրջանից դեպի հարավ-արևելք։ Վանի թագավորների արձանագրությունների մեջ չեն հիշատակվում այդտեղ ընկած երկրները։ Մի այլ տեղում ես[11] փորձել եմ այս հանգամանքը բացատրել նրանով, որ Վանի թագավորների առաջխաղացման համար Մակուի շրջանից՝ պատմական Արտա-ֆ գավառից, որտեղ նրանց ներկայության մասին անվիճելի ապացույցներ են տալիս այնտեղ նրանց թողած արձանագրությունները, դժվար հաղթելի արգելքներ էին դնում այն ընդարձակ ճահիճները, որոնք այն ժամանակ տարածված էին ոչ միայն այժմյան Զանգիբասարում և Սադարակի դաշտում, այլ ավելի լայն և երկար շերտով՝ Վաղարշապատի տակից սկսած Արաքսի ամբողջ ձախակողմյան ափերով գրեթե մինչև Մեղրու կիրճը։ Այդ ընդարձակ ճահիճների և նրանց վրա ճոխ եղեգնուտների մասին վկայություն են պահպանել մի քանի տարի առաջ Նախիջևանի Կարմիր վանքում (Ղըզըլ-վանքում) Ադրբեջանի գիտական ուժերի օգնությամբ կատարված պեղումների միջոցին գետնի միջից հանված մեծ կավե ամանի վրա գեղեցիկ պահպանված նկարները, որտեղ կարապներն ու եղեգնուտի մեջ ապրող վայրի էշը[12] պատկերված են զարմանալի կենդանի գծերով։ Զանգեզուրում մեր գիտարշավների հավաքած պատահական իրերը, ինչպես և Ռեսլերի պեղումների ժամանակ գտնված իրերը չեն կրում խալդական (ուրարտական) կուլտուրայի ազդեցության հետքեր։ Նրանց ուսումնասիրությունը կոչանդակի Զանգեզուր-Ալանգյազի լեռնաշղթայի արևմտյան գավառներում հայտնաբերված հնագիտական իրերի մեջ զանազանելու, թե՝

Նրանցից որո՞նք են պատկանում այն ժամանակներին, երբ Վանա թագավորների զենքի հետ դեռ չէր մտել նաև խալդական կուլտուրան և տեղում իշխում էին հնուց կազմավորված ձևերը, Զանգեզուրում գտնվող ձևերին շատ մերձավոր և թե՝

ո՞րոնք են ավելի ուշ ժամանակների գործ։

Հնագիտական իրերը չեն անջատում Զանգեզուրի հին բնակչությունը անդրկովկասյան այլ ժողովուրդներից և ամենից ավելի մերձավոր աղերս են ցուցաբերում Ղարաբաղում՝ Առաջաձորում, Խոջալիում Ռեսլերի պեղած իրերի հետ։ Զանգեզուրի տեղանունները թույլ են տալիս եզրակացնելու, որ Զանգեզուրումն էլ, ինչպես Լեռնային Ղարաբաղում՝ պատմական Արցախում, հին էթնիկ շերտը ազգակից է եղել Աղվանքի հին բնակիչներին։ Այստեղ հանդիպում ենք՝

Բեխ-ուտիերեն արև. Վաշագան՝ Աղվանքում և Արցախում սիրված հատուկ անուն՝ գյուղական անուններին. բազմաթիվ վայրերի աղու և աղ արմատներով կազմված անուններին— Աղուերձ, Աղուդի գյուղեր, Աղուանից՝ Հագարու գետ, Աղահեջ գավառ, Աղահի գյուղ...

---

[11] Տե՛ս իմ «Кошун-даш, мегалитическое городище в Сисиане (Зангезур), АН СССР, XLV, Сборник академику Н. Я. Марру», 1935, էջ 709։

[12] Онагр.